ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 104-Ա

Արթիկ համայնք 09 հուլիսի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 09-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 85-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 107-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել նիստի հետևյալ օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2026 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին:
   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2027-2029 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:
   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2026 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին:
   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի կողմից նվիրատվության պայմանագրով ձեռք բերված «JAC» մակնիշի «LJ166B3D2T2255918» և «LJ166B3D9T2255916» նույնականացման համարներով ավտոբուսները Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի հաշվեկշռում ընդգրկելու մասին:
   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող «JAC» մակնիշի «LJ166B3D2T2255918» և «LJ166B3D9T2255916» նույնականացման համարներով ավտոբուսները անհատույց օգտագործման իրավունքով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի համայնքային տնտեսության սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
6. Գոռ Վանյայի Պետրոսյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 202-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2026 թվականի բյուջեի վարչական մասի «Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ» բաժնում նախատեսված գումարից հատկացում կատարելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 202-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2026 թվականի բյուջեի ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ բաժնում նախատեսված գումարից հատկացում կատարելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Ասատրյան		
Չարչյան		
Սահակյան		

Մինասյան
Վարդանյան
Մկրտչյան
Վարագյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի հուլիսի 09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 105-Ա

Արթիկ համայնք 09 հուլիսի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2026 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի հաղորդումն ընդունել ի գիտություն /համաձայն N 1, N 2, N 3, N 4 և N 5 հավելվածների/:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Ասատրյան		

Չարչյան
Սահակյան
Մինասյան
Վարդանյան
Մկրտչյան
Վարագյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի հուլիսի 09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 106-Ն

Արթիկ համայնք 09 հուլիսի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2027-2029 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն N 1, N 2, N 3 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Ասատրյան		
Չարչյան		
Սահակյան		
Մինասյան		
Վարդանյան		
Մկրտչյան		
Վարագյան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի հուլիսի 09

Հավելված N 1
ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու
2026 թվականի հուլիսի 09-ի
N 106-Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ

2027-2029 ԹԹ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արթիկ համայնքի 2027-2029 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագիրը (այսուհետև՝ ՄԺԾԾ) համայնքի առաջիկա երեք տարիների զարգացման ռազմավարական ֆինանսական փաստաթուղթ է, որի հիմքում ընկած են համայնքի զարգացման հնգամյա ծրագրերով սահմանված համայնքի զարգացման հիմնախնդիրները, ինչպես նաև ՀՀ կառավարության ծրագրերով որդեգրված առաջնահերթ ուղղությունները, որոնք արտացոլված են վերջին տարիներին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված գերակայություններում:

2027-2029 թվականների միջնաժամկետ հատվածում Արթիկ համայնքի ռազմավարության հիմնական ուղղություններն են ճանապարհային տրանսպորտ, ջրամատակարարում, ոռոգում, բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ, փողոցների լուսավորություն, գազաֆիկացում: Նշված բնագավառներում էական ներդրումներ իրականացնելու համար նախատեսված է դիմել ինչպես սուբվենցիոն ծրագրերի, այնպես էլ դոնոր կազմակերպությունների կողմից հայտարարվող դրամաշնորհային մրցույթների: Կապիտալ ներդրումների իրականացման համար անհրաժեշտություն է ունենալ ֆոնդային բյուջե, սակայն համայնքի ֆոմդային ռեսուրսները սահմանափակ են, ուստի առաջիկա երեք տարիներին նախատեսված է ձևավորել վարչական բյուջեի առավելագույն պահուստային ֆոնդ, որպեսզի հնարավոր լինի իրականացնել վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացումներ:

Արթիկ համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի կանխատեսումների առանձնահատկությունները

Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգում օրենսդրությամբ սահմանվել է համայնքում իրականացվող ռազմավարական ծրագրավորման երեք փուլ, որոնք տարբերվում են միմյանցից ինչպես դրանց ծրագրավորման ժամանակային հորիզոնով, այնպես էլ յուրաքանչյուր փուլում ծրագրավորվող տարրերի ագրեգացման մակարդակով: Այսպես, կախված ծրագրավորման ժամանակային հորիզոնից՝ նախատեսվում է հնգամյա ժամանակահատվածի (երկարաժամկետ), եռամյա ժամանակահատվածի (միջնաժամկետ) և մեկ տարվա ժամանակահատվածի (կարճաժամկետ) ծրագրերի մշակում: Երկարաժամկետ ծրագրերում ծրագրային տարրերը ներկայացվում են ագրեգացման առավել բարձր մակարդակով, քան միջնաժամկետ ծրագրերում, իսկ միջնաժամկետ ծրագրերում դրանց մակարդակն ավելի բարձր է, քան կարճաժամկետ ծրագրերում:

Վերը նշված ծրագրավորման երեք փուլերը փոխկապակցված են, և յուրաքանչյուր փուլում կազմված և սահմանված կարգով հաստատված ծրագիրը հիմք է հանդիսանում հաջորդ փուլում կազմվելիք ծրագրի համար: Մասնավորապես, երկարաժամկետ ծրագիրը հիմք է հանդիսանում միջնաժամկետ ծրագրի մշակման համար, իսկ միջնաժամկետ ծրագիրը իր հերթին հիմք է հանդիսանում կարճաժամկետ ծրագրի մշակման համար:

Համայնքի երկարաժամկետ ծրագիրը՝ համայնքի զարգացման հնգամյա ծրագիրն է, միջնաժամկետ ծրագիրը՝ երեք տարվա համար կազմվող համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրն է, իսկ կարճաժամկետ ծրագիրը՝ մեկ տարվա համար կազմվող համայնքի բյուջեն է: Եթե համայնքի զարգացման ծրագիրը հաստատվում է մեկ անգամ ավագանու լիազորությունների ամբողջ ժամանակահատվածի՝ 5 տարվա համար (անհրաժեշտության դեպքում կարող են լինել փոփոխություններ), ապա համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը մշակվում և հաստատվում է յուրաքանչյուր տարի՝ առաջիկա 3 տարվա համար:
Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում: Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի դրույթների իրագործման հիմնական գործիքը, որը հնարավորություն է տալու առավել իրատեսական, առարկայական դարձնել համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը՝ առաջիկա երեք տարվա համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրն է (ՄԺԾԾ): Այն հստակեցնում է եռամյա ժամանակահատվածում համայնքի ծախսային քաղաքականությունը տարեկան կտրվածքով՝ հնարավորություն ընձեռնելով համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները և ստեղծելու պատշաճ ծրագրային հիմքեր առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակման համար: Այսինքն՝ համայնքի տարեկան բյուջեի նախագծի կազմման գործընթացն առաջնորդվելու է արդեն իսկ կազմված համայնքի ՄԺԾԾ-ով՝ առաջիկա տարվա համար հաստատված հաշվարկներով և հիմնավորումներով: Եվ հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ համայնքի ՄԺԾԾ նախագծի մշակումը նույնպես, ինչպես և տարեկան բյուջեի նախագծի մշակումը, համայնքի բյուջետային գործընթացի լիիրավ փուլ է համարվում:

Համայնքի եռամյա միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման փուլի ներմուծմամբ համայնքի համար հնարավորություն է ընձեռնվում անցնել եռամյա ֆինանսական ծրագրավորմանը և տեսնել համայնքի բյուջեի մշակման փուլին բնորոշ մեկ տարվա տեսադաշտից ավելի հեռու՝ երեք տարվա հորիզոնով: Այդ ժամանակահատվածում

համայնքի համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության, ինչպես նաև այլ գործոնների ազդեցության կանխատեսումները հնարավորություն կընձեռնեն համայնքին մի կողմից՝ մեծացնել համայնքի ֆինանսական ծրագրերի կանխատեսելիությունը, ծրագրերի շարունակականության ապահովման ֆինանսական մեխանիզմների հստակեցումը, իսկ մյուս կողմից՝ բարձրացնել համայնքներում բյուջետային կարգապահությունը և հաշվետվողականությունը: Առաջիկա երեք տարվա՝ տեղական ինքնակառավարման մարմինների ՄԺԾԾ մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել համայնքների համար կառավարելու ֆինանսական ռեսուրսներն իր միջնաժամ-կետ հարկաբյուջետային նպատակներին և քաղաքականության գերակայություններին համապատասխան:

Արթիկ համայնքի 2027-2029 թվականների ՄԺԾԾ համայնքի առաջիկա երեք տարիների զարգացման ռազմավարական ֆինանսական փաստաթուղթն է, որի հիմքում ընկած են համայնքի զարգացման հնգամյա ծրագրերով սահմանված համայնքի զարգացման հիմնախնդիրները:

Արթիկ համայնքի 2027-2029 թվականների ՄԺԾԾ ոլորտային գերակայությունները

Գերակայությունները որոշվում են ինչպես համայնքի զարգացման հնգամյա ծրագրերի գերակայությունների, այնպես էլ յուրաքանչյուր տարվա համայնքի բյուջեով: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրերի առաջնահերթ ուղղությունները և հաշվի առնելով համայնքի խնդիրները, համայնքը իր առջև դրել է հետևյալ գերակայությունները՝

1. Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշգրտելով անշարժ գույքի հարկի բազաները, բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը և նպատակային օգտագործելով բյուջետային միջոցները:
2. Բարձրացնել ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների և բնակիչների հետ աշխատանքի արդյունավետությունը:
3. Իրականացնել համայնքի ֆինանսատնտեսական և հաշվապահական հաշվառման գործունեության արդյունավետ կազմակերպում՝ համադրելով ֆինանսական ծրագրերի (հանրային հատվածի հաշվապահություն, ՀՀ ՖՆ գանձապետարանի ծրագիր) և ամփոփ հաշվեկշիռների հրապարակայնություն ՀԿՏՀ-ում:
4. Բարձրացնել բնակչությանը և տնտեսվարող սուբյեկտներին մատուցվող համայնքային ծառայությունների և այլ լրացուցիչ ծառայությունների մակարդակն ու որակը:
5. Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, գույքային վերազինման և այլ աշխատանքներ:

6. Աջակցություն ցուցաբերել և իրականացնել միջոցառումներ համայնքի բնակչության՝ խոցելի խմբերին, բազմազավակ ընտանիքներին, հաշմանդամներին նյութական օգնություն տրամադրելու գործում:
7. Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բնակարանային, կոմունալ տնտեսության բարեկարգման, ճանապարհային տնտեսության բնագավառներում, ավելացնել փողոցային լուսավորությունը, առկա լուսավորության համակարգը փոխարինելով էներգախնայող լուսատուներով:
8. Խթանել համայնքում գենդերային, հաշմանդամության և խոցելի խմբերի համար ծրագրերի իրականացումը:
9. Իրականացնել օրենքով համայնքի ղեկավարին վերապահված լիազորություններ՝ պաշտպանության և արտակարգ իրավիճակների պայմաններում գործողություններ իրականացնելու ոլորտում:

Համայնքի զարգացման հիմնական ուղղությունները միտված են բնակչության կենսական մակարդակի բարելավմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքում հարմարավետ ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը, ինչպես նաև համայնքում գենդերային հավասարությանը:

Համայնքը կարևորում է համայնքային ենթակայության մշակույթի և սպորտի բնագավառների՝ մշակույթի տների, գրադարանների, երաժշտական դպրոցների աշխատողների աշխատավարձերի բարձրացումը, շարունակվում են համայնքային ենթակայության հուշարձանների վերականգնման և պահպանման աշխատանքները: Համայնքային կառավարման ոլորտում իրականացվում են համայնքային ծառայության կատարելագործման, տեխնիկական վերազինմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև համայնքային ծառայողների անձնակազմի կարողությունների զարգացումը: Տնտեսության ոլորտում շարունակվում են ներդրումները ճանապարհային տրանսպորտի, առևտրի և տնտեսական զարգացման, քաղաքաշինության, անշարժ գույքի կադաստրի, գյուղատնտեսության և ջրային տնտեսության, էներգետիկայի և բնապահպանության ոլորտներում (համապատասխան ծրագրերի առկայության պայմաններում):

Բնապահպանության բնագավառում կարևորվում են աղբահանության և սանիտարական մաքրման, այդ թվում՝ անօրինական աղբանոցների վերացման, ինչպես նաև թափոնների կառավարման գործընթացների և միջոցառումների ու ենթածրագրերի, տարածքների կանաչապատման, բնապահպանական այլ միջոցառումների իրականացումը:

Տրանսպորտի և կապի բնագավառում իրականացվելիք ծախսային քաղաքականության հիմնական գերակայություններն են ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգումը և լուսավորությունը:

Տնտեսական զարգացման բնագավառի հիմնական գերակա ուղղությունն է գյուղատնտեսության, տեղական զբոսաշրջության զարգացման, արևային էներգիայով աշխատող օբյեկտների կառուցման միջոցառումների իրականացումը:
Քաղաքաշինության բնագավառի հիմնական ուղղություններն ու ծախսային գերակայություններն են՝ համայնքների բարեկարգման, բազմաբնակարան շենքերի սպասարկման, վթարային շենքերի ամրացման կամ նոր շենքերի կառուցման, անօթևան մնացած քաղաքացիների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի, համայնքում ապօրինի շինությունների քանդմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

ՄԱՍ 1. Արթիկ համայնքի բյուջեի եկամուտները

2027-2029 թվականների Արթիկ համայնքի միջնաժամկետ ծախսային ծրագրում առաջիկա երեք տարիների համար համայնքի եկամուտները պլանավորելիս հիմք է հանդիսացել օրենքով սահմանված և նախորդ երեք տարիներին հավաքագրված միջին ցուցանիշները:

Արթիկ համայնքի եկամուտների գոյացման աղբյուրները բաժանվում են երկու խմբի՝ սեփական եկամուներ և պաշտոնական դրամաշնորհներ:

2025 թվականի Արթիկ համայնքի **վարչական բյուջե** մուտքագրված 3,152,469.3 հազ. դրամ եկամուտներից 848,482.2 հազ. դրամը բաժին է ընկել սեփական եկամուտներին, իսկ 2,296,628.4 հազ. դրամը՝ ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրված դոտացիայի գումարն է, 3,360.7 հազ. դրամը՝ այլ դոտացիայի գումարն է, 3,998.0 հազ. դրամը՝ պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ:

Ֆոնդային բյուջեի եկամուտները գոյացել են վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող մասհանումների (230,000.0 հազ.դրամ), պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվնցիաներ) (759,888.5 հազ.դրամ) հաշվին, համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքերի (88.0 հազ. դրամ) հաշվին:

Արթիկ համայնքի 2027-2029 թվականների ՄԺԾԾ-ի կազմման հիմքում ընկած է ինչպես նախորդ տարիների բյուջեի մուտքերի վերլուծությունը, այնպես էլ տարբեր նորմատիվ իրավական ակտերով սահմանված համայնքի բյուջեին ամրագրված եկամուտների դրույքաչափերը և դրանցում կատարված փոփոխությունները: Մասնավորապես պլանավորման ժամանակ հաշվի են առնվել.

- **<u>անշարժ գույքի հարկի մասով</u>**

Այս հարկատեսակի գծով եկամուտների պլանավորման ժամանակ հաշվի է առնվել ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված անշարժ գույքի հարկի դրույքաչափերը: Հաշվի է առնվել նաև կուտակված ապառքների գումարները և դրանց գանձման դինամիկան:

- **<u>փոխադրամիջոցների գույքահարկի մասով.</u>**

Այս հարկատեսակի գծով եկամուտների պլանավորման ժամանակ հաշվի է առնվել համայնքում գրանցված փոխադրամիջոցների գծով ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով և դրույքաչափերով հաշվարկված հարկի գումարները, ինչպես նաև կուտակված ապառքների գումարները և դրանց գանձման դինամիկան:

- **<u>տեղական տուրքերի և վճարների մասով</u>**

Տեղական տուրքերի և վճարների գումարների պլանավորումը իրականացվել է՝ հաշվի առնելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործողությունների և ծառայությունների համար Արթիկ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված դրույքաչափերը:

- **<u>վարձակալական վճարների մասով</u>**

Այս վճարի պլանավորումը իրականացվել է իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կնքված հողի և անշարժ գույքի վարձակալության պայմանագրերով սահմանված վարձակալական վճարների տարեկան հաշվարկի գումարների համաձայն:

- **<u>այլ եկամուտների մասով</u>**

Արթիկ համայնքի այլ եկամուտներից են համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի վարձակալության վարձավճարները, համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարները, այլ գույքի վարձակալությունից մուտքերը, որոնց հաշվարկման ժամանակ անհրաժեշտ է հիմք ընդունել նախորդ տարիների համար կնքված պայմանագրերի ցուցանիշները: Վարձակալության հանձնվող հողերի վարձակալական վճարները չպետք է պակաս լինեն այդ հողերի համար հաշվարկվող անշարժ գույքի հարկի մեծությունից: Այլ եկամուտ է նաև վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները:

- **<u>պետական տուրքերի մասով</u>**

Արթիկ համայնքի բյուջե են մուտքագրվում օրենքով ամրագրված հետևյալ պետական տուրքերից մուտքերը.

1. նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար պետական տուրքերը:

- **<u>պաշտոնական դրամաշնորհների մասով</u>**

Պետական բյուջեից հատկացվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարները կհաշվարկվեն լիազորված պետական մարմնի կողմից՝ «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքներին համապատասխան:

Համայնքի բյուջեի նախագիծ կազմելիս՝ հիմքում դրվում է համայնքի ՄԺԾԾ-ն՝ տվյալ բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա:

Առաջիկա երեք տարվա՝ համայնքի ՄԺԾԾ մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները:

ՄԱՍ 2. Արթիկ համայնքի բյուջեի ծախսերը

Կապիտալ ծախսերը պլանավորվել է՝ հաշվի առնելով 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը:

2027 թվականի կապիտալ ծախսերի մեջ ընդգրկվել է հետևյալ սուբվենցիոն ծրագրերը՝

1. Ճանապարհային տրանսպորտ

«Արթիկ համայնքի թվով 2 բնակավայրերի փողոցների ասֆալտապատում» սուբվենցին ծրագիր: Ծրագրի նախահաշվային արժեքը կազմում է 600,000.0 հազ. դրամ, որի 55%-ը կամ 330,000.0 հազ. դրամը պետք է հատկացվի համայնքային բյուջեից (ծրագրի արժեքը կարող է փոփոխվել՝ կախված մրցույթի արդյունքներից):

«Արթիկ համայնքի թվով 20 բնակավայրերի ճանապարհների տուֆ քարով սալապատում» սուբվենցին ծրագիր: Ծրագրի նախահաշվային արժեքը կազմում է 550,000.0 հազ. դրամ, որի 35%-ը կամ 192,500.0 հազ. դրամը պետք է հատկացվի համայնքային բյուջեից (ծրագրի արժեքը կարող է փոփոխվել՝ կախված մրցույթի արդյունքներից):

2. Փողոցների լուսավորում

«Արթիկ համայնքի թվով 22 բնակավայրերում լուսավորության ցանցի կառուցում» սուբվենցիոն ծրագիր: Ծրագրի արժեքը կազմում է 366,000.0 հազ. դրամ, որի 50%-ը կամ 183,000.0 հազ. դրամը պետք է հատկացվի համայնքային բյուջեից (ծրագրի արժեքը կարող է փոփոխվել՝ կախված մրցույթի արդյունքներից):

3. Նավթամթերք և բնական գազ

«Արթիկ համայնքի թվով 6 բնակավայրերի գազատարի ներքին ցանցի կառուցում» սուբվենցիոն ծրագիր: Ծրագրի արժեքը կազմում է 200,760.8 հազ. դրամ, որի 50%-ը կամ 100,380.4 հազ. դրամը պետք է հատկացվի համայնքային բյուջեից (ծրագրի արժեքը կարող է փոփոխվել՝ կախված մրցույթի արդյունքներից):

4. Ջրամատակարարում

«Արթիկ համայնքի թվով 4 բնակավայրերի խմելու ջրագծերի հիմնանորոգում» սուբվենցիոն ծրագիր: Ծրագրի արժեքը կազմում է 400,000.0 հազ. դրամ, որի 50%-ը կամ 200,000.0 հազ. դրամը պետք է հատկացվի համայնքային բյուջեից (ծրագրի արժեքը կարող է փոփոխվել՝ կախված մրցույթի արդյունքներից):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի հուլիսի 09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 107-Ա

Արթիկ համայնք 09 հուլիսի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ (ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ) ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի 3-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջների՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի կողմից կազմված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը)՝ 2026 թվականի հուլիսի 1-ի դրությամբ: /Համաձայն հավելվածի/
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Ասատրյան		
Չարչյան		
Սահակյան		
Մինասյան		
Վարդանյան		

Մկրտչյան
Վարագյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի հուլիսի 09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 108-Ա

Արթիկ համայնք 09 հուլիսի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ «JAC» ՄԱԿՆԻՇԻ «LJ166B3D2T2255918» ԵՎ «LJ166B3D9T2255916» ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐՆԵՐՈՎ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի կողմից նվիրատվության պայմանագրով ձեռք բերված «JAC» մակնիշի «LJ166B3D2T2255918» նույնականացման համարով ավտոբուսն ընդգրկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի հաշվեկշռում:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի կողմից նվիրատվության պայմանագրով ձեռք բերված «JAC» մակնիշի «LJ166B3D9T2255916» նույնականացման համարով ավտոբուսն ընդգրկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի հաշվեկշռում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		

Պետրոսյան
Գևորգյան
Ասատրյան
Չարչյան
Սահակյան
Մինասյան
Վարդանյան
Մկրտչյան
Վարագյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի հուլիսի 09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 109-Ա

Արթիկ համայնք 09 հուլիսի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «JAC» ՄԱԿՆԻՇԻ «LJ166B3D2T2255918» ԵՎ «LJ166B3D9T2255916» ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐՆԵՐՈՎ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող «JAC» մակնիշի «LJ166B3D2T2255918» նույնականացման համարով ավտոբուսը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի համայնքային տնտեսության սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող «JAC» մակնիշի «LJ166B3D9T2255916» նույնականացման համարով ավտոբուսը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի համայնքային տնտեսության սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:
3. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված «JAC» մակնիշի «LJ166B3D2T2255918» **և** «LJ166B3D9T2255916» նույնականացման համարներով ավտոբուսները հանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի հաշվեկշռից և հաշվառել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի համայնքային տնտեսության սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվեկշռում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		

Բաղդասարյան
Գևորգյան
Հովհաննիսյան
Պետրոսյան
Գևորգյան
Ասատրյան
Չարչյան
Սահակյան
Մինասյան
Վարդանյան
Մկրտչյան
Վարագյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի հուլիսի 09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 110-Ա

Արթիկ համայնք 09 հուլիսի 2026 թվական

ԳՈՌ ՎԱՆՅԱՅԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակել Գոռ Վանյայի Պետրոսյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (12)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (2)**
Ոսկանյան		Վարդանյան
Թովմասյան		Վարագյան
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Գևորգյան		
Ասատրյան		
Չարչյան		
Սահակյան		
Մինասյան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի հուլիսի 09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 111-Ա

Արթիկ համայնք 09 հուլիսի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 202-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ» ԲԱԺՆՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, 90-րդ հոդվածի 1-ի և 6-րդ մասերով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-իթիվ 202-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2026 թվականի բյուջեի վարչական մասի «Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ» բաժնի 11.1.2 դասակարգմամբ «Պահուստային միջոցներ» 4891 հոդվածում գրված «264867100 երկու հարյուր վաթսունչորս միլիոն ութ հարյուր վաթսունյոթ հազար մեկ հարյուր» թիվը և բառերը փոխարինել «257967100 երկու հարյուր հիսունյոթ միլիոն ինը հարյուր վաթսունյոթ հազար հարյուր» թվով և բառերով, պակասեցված 6900000 (վեց միլիոն ինը հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարն ուղղել

1) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ բաժնի 01.6.1 դասակարգմամբ

ա/ «Տեղեկատվական ծառայություններ» 4234 հոդվածում գրված «800000 ութ հարյուր հազար» թիվը և բառերը փոխարինել «1300000 մեկ միլիոն երեք հարյուր հազար» թվով և բառերով:

բ/ «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» 4639 հոդվածում գրված «6000000 վեց միլիոն» թիվը և բառերը փոխարինել «12400000 տասներկու միլիոն չորս հարյուր հազար» թվով և բառերով: /Գերմանական միջազգային համագործակցության ընկերության /GIZ-ի/ հայաստանյան գրասենյակի կողմից իրականացվող «Տեղական զարգացման հիմնադրամ» ծրագրի «Համայնքների կարողությունների բարելավում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի ոլորտում» նախաձեռնության շրջանակներում ֆինանսավորվող Արթիկ համայնքի «Արթիկի թիվ 1 մսուր-մանկապարտեզ», «Արթիկի թիվ 3 մանկապարտեզ», «Արթիկի թիվ 4 մսուր-մանկապարտեզ», «Արթիկի մարզահամալիր» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների համար «Արևային էներգիայի համակարգերի ներդրում և էներգիաարդյունավետության բարձրացում» դրամաշնորհային ծրագրի իրականացման համար համայնքի կողմից համաֆինանսավորման գումար՝ ծրագրի ընդհանուր գումարի՝ 32000000 /երեսուներկու միլիոն/ դրամ, 20%-ի չափով - 6400000 /վեց միլիոն չորս հարյուր հազար/ դրամ/:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Գևորգյան		
Ասատրյան		
Չարչյան		
Սահակյան		
Մինասյան		
Վարդանյան		
Մկրտչյան		
Վարագյան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի հուլիսի 09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 112-Ա

Արթիկ համայնք 09 հուլիսի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 202-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ /ԱՅԼ ԴԱՍԵՐԻՆ ՉՊԱՏԿԱՆՈՂ/ ԲԱԺՆՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ինմասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 202-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2026 թվականի բյուջեի Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ բաժնի «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» (4639) հոդվածում նախատեսված գումարից՝ 6400000 /վեց միլիոն չորս հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ, որպես դրամաշնորհ հատկացնել Գերմանական միջազգային համագործակցության ընկերության /GIZ-ի/ հայաստանյան գրասենյակի կողմից իրականացվող «Տեղական զարգացման հիմնադրամ» ծրագրի «Համայնքների կարողությունների բարելավում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի ոլորտում» նախաձեռնության շրջանակներում ֆինանսավորվող Արթիկ համայնքի «Արթիկի թիվ 1 մսուր-մանկապարտեզ», «Արթիկի թիվ 3 մանկապարտեզ», «Արթիկի թիվ 4 մսուր-մանկապարտեզ», «Արթիկի մարզահամալիր» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների համար «Արևային էներգիայի համակարգերի ներդրում և էներգիաարդյունավետության բարձրացում» դրամաշնորհային ծրագրի իրականացման համար համայնքի կողմից համաֆինանսավորման գումար՝ ծրագրի ընդհանուր գումարի՝ 32000000 /երեսուներկու միլիոն/ դրամ, 20%-ի չափով:/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		

Գևորգյան
Ասատրյան
Չարչյան
Սահակյան
Մինասյան
Վարդանյան
Մկրտչյան
Վարագյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2026 թվականի հուլիսի 09